Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն
13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ
ՈՉԽԱՐՆԵՐ

Մի քանի ժամ ևս, և կհասնեինք քաղաք։

Բայց ընկերս շատ հոգնել էր, գիշերն էլ թաց էր և ցուրտ։

Ստիպվեցինք կանգ առնել մի գյուղի կայարանում և գիշերել այնտեղ։ Մեզ տվին բարձրադիր օդա, հնոցի մեջ խարույկ վառեցին, հետո կերակուր մատուցին և խոստացան առավոտը կանուխ զարթեցնել։

Կերակրից հետո ընկերս իսկույն քնեց, իսկ ես պահ մի պաաշգամբ ելա, կռթնեցի փայտե սյունին և սկսեցի շրջակայքը դիտել։

Առջևս տարածված կար մի ընդարձակ մշուշալից դաշտ, որ փռվում էր մինչև լեռները։ Մի կատար կոնաձև դուրս էր ցցում իր ձյունապատ գլուխը այդ լեռնակույտի միջից, իսկ լուսնկայի լույսի տակ կապտած ծառազարդ գյուղերը նրանց ստորոտում, կարծես լղրճվել էին թացությունից։ Ավելի մոտ՝ մի քանի խրճիթներ թաց ու ճղփուն տանիքներով, միմյանց էին կպել մի բարձր շենքի շուրջը։

Պատշգամբիցս անմիջապես ցած՝ տարածվում էր մի ընդարձակ աղտոտ ու ցեխոտ բակ, իսկ նրա վերջին ծայրի գմբեթածածկ զավթից լսվում էին ուղտերի մելամաղձոտ ձայներ՝ խառն բոժոժների հնչյունների։ Երբեմն ականջիս էին հասնում ջորեպանների խուլ աղաղակներ ախոռների ներսերից… սրճատան բացուխուփ լինող դռնից ընդհատ կերպով լսվում էին գիշերային խռպոտ խոսակցություններ, ապա դաշտի կողմից հեռավոր ռռնոցներ գալիս էին միանալու դրանց, և այդ բոլորի միջից՝ որոճացող ուղտերի վզից ճռճվող զանգակներն էին, որոնք իրենց անընդհատ ու պարբերական ղողանջյունով թմբիր էին ազդում…

Կարծեմ երկար այդպես կռթնած մնացել էի, երբ աչքս ընկավ մեծ ճանապարհի վրա, ուր մշուշի միջից մի առ մի դուրս գալով՝ երևում էին շարժուն ստվերներ և ծանրությամբ մոտենում կայարանին։ Հետիոտն ճանապարհորդներ էին։ Իջա մի ցած տանիքի վրա ավելի մոտիկից դիտելու համար։

Մի խումբ գյուղացիներ էին։ Կին, մանուկ, ծեր ու պառավ, գրեթե մերկ մարմինը տված խոնավության ու կծու ցրտին, ատամները կափկափելով ու ոտաբոբիկ՝ գնում էին ցեխի ու ջրակույտերի միջով։ Առջևից քայլում էին մի քանի մանուկներ, մեկը աղջիկ էր, հետո, երկու կին՝ մեկը պառավ, ապա, մի քանի հասակավոր աղջիկներ, ու երկու երեք ցուպավոր տղամարդիկ։

Սրճատան դուռը չբացվեց նրանց առաջ, ախոռների մեջ էլ չթողեցին։ Վախենում էին, որ բան չգողանան։

Ու մնացին նրանք փողոցի ցեխի մեջ կծկված, դողդոջուն։ Էլ առաջ գնալ չէին կարողանում, կանայք կկզեցին գետին՝ սրճատան պատի տակ, մանուկները նստեցին ցեխերի մեջ, իսկ մի ծերունի տեղնուտեղը կքվեց ճանապարհի վրա։

Ցած իջա և դիմեցի կայարանապետին, պահանջելով, որ նրանց տեղ տար գիշերելու։ Զարմացած ինձ նայեցին, չէին հասկանում, թե ինչպես կարելի էր հուզվել մի այդպիսի «սովորական» տեսարանի առաջ։

- Էֆենդիները դեռ նոր են մտնում այս երկիրը,— արդարացրեց ինձ մեզ ուղեկցող զափթիեն։— Բայց քաղաք որ մտնեն, էլ չեն զարմանալ։

- Դրանք գող էլ են լինում,– ավելացրեց մի ուրիշը,– ո՞վ տեղ կտա դրանց։

Թշվառները լսում էին, բայց ոչ մի բառ չարտասանեցին, տնքում էին միայն ու հառաչում, այլև նայում էին մեզ հուսահատ, նախատինքներից բթացած ու վիրավորվող ստրուկների համբերատարությամբ։

— Ո՞ր գյուղից եք,— հարցրեց նրանց կայարանապետը։

Մի գյուղի անուն տվին, չեմ հիշում։ Թուրքերից մեկը ձեռքը դեպի աջ պարզեց ու ասաց.

— Այն լեռների մեջն է։ Ամենքը ցրվում են…

— Դուք էլ եք գանգատի գնո՞ւմ,— հարցրեց մի զափթիե։

— Այո՛,— պատասխանեց ծերունին։

Եվ թուրքերը միմյանց նայելով ծիծաղեցին։

— Շատ կշահեք, այ,— հեգնեց հյուրընկալը։

— Այդ ի՞նչ գանգատ է,— հետաքրքրվեցի։

Նորից զարմանքով ինձ նայեցին. մի՞թե չգիտեի. մի՞թե այդքան տգետ էի այդ երկրի թշվառությունների վերաբերմամբ։

— Ի՞նչ պիտի լինի,— ծիծաղեց կայարանապետը։— Քամում են սրանց, ահա թե ինչ. էլ ոչինչ չեն թողնում. տուրքերի տակ խեղդում էն, սպանում բոլորին… աստված է վկա, որ ոչ մի ինսափով մարդ չի կարող առանց զայրույթի տեսնել այդ բոլորը։

— Էլ ուտելու բան չմնաց, ավելացրեց մի թշվառ կին, որ կծկվել էր պատի տակ և աջ թևովը պարուրել էր իր մերկ ու ցեխաթաթախ զավակին։

— Շոր էլ չմնաց, տավարները տարան…

— Սպանում են, տանջում… բանտ տանում։

Մի բոպե ոչ ոք չխոսեց։

— Էհ,— արեց կայարանապետը,— խելք ունիք՝ քաղաք մի գնաք, Հյուսեյն աղայից գանգատել չէ կարելի, իսկ գանգատելով էլ տուրքերը չեք թեթևացնիլ… ձեզանից առաջ շատերը գնացին, ո՞ւր է, այլևս տեսե՞լ եք նրանց…

Թշվառները դողդոջուն, ավելի սարսափահար այդ ճշմարիտ խոսքերից, հուսահատ հայացքով մեզ էին նայում։

— Բայց այս ցրտում խո կսառեն դրանք,— գոչեցի ես,— չէ՞ որ կմեռնեն, եթե դուրսը մնան։

Ու երբ սպասում էի, որ կայարանապետը մի ճար աներ, լսեցի, որ մեկը ասում էր ետևիցս.

— Ավելի լավ իրենց համար, որ ապրում են, հա՞մ առնում են կյանքից։

Չիմացա ով էր ասողը. թո՞ւրք էր, քո՞ւրդ, թե՞ հայ։ Ով որ էր, մի մարդ էր այդ խոսողը։

— Մի տեղ տուր վերջապես,— ասացի բարկությամբ,- ես կվճարեմ դրա համար։

Գտան տեղ։ Փայտանոցն էր, մի կողմը դատարկ։ Այնտեղ լցրին նրանց, ու կայրանապետը գլուխը կասկածանքով շարժելով հեռացավ։ Լսեցի, որ ասում էր ծառաներին.

— Լավ հսկեցեք, դրանք անշուշտ մի բան կգողանան…

* * *

— Վեր կացեք, աղա, մեկնելու ժամանակ է, ձիերը պատրաստ են։

Ելանք, հագնվեցինք և կես ժամից հետո ձի էինք նստում։ Աղոթարանը բացվել էր։

Կայարանապետը մոտեցավ մեզ, վճարեցի եղած ծախսը և սենյակի համար։

— Տասը ղրուշ էլ ավելի պիտի տաք,— ասաց նա։

— Ինչո՞ւ։

— Այն աղքատները, որոնց դուք պատճառ եղաք ներս առնելու, փայտանոցում մոռացված մի հին կարպետ են առել և անհետացել…

Վճարեցի ուզածը։

— Ես գիտեի, ախր,— ավելացրեց նա,– մրսում են և ծածկոց չունեին։ Հետո բարևեց և, երբ շարժվում էինք, գոչեց.

— Եթե ճանապարհին նրանց հանդիպեք, ես ասել եմ զափթիաներին, թող ձեռներիցը խլեն կարպետը ու մի լավ էլ ծեծեն…

— Բայց չէ՞ որ նրանք շատվոր են, կընդդիմադրեն։

— Ընդդիմադրե՞լ… այդ ոչխարնե՞րը…

Այդ միջոցին էր, որ կայարանի մի ծառան մոտ վազեց ու կանչեց իր տիրոջը։

— Օսման աղա,— գոչում էր նա,— կարպետը գտնվեց։

— Գտնվե՞ց։

— Այո… մի քիչ տեղ տարել են և երևի վախեցել են ու թողել են պատի տակ…

Կայարանապետը նայեց ցույց տված կողմը, տեսավ կարպետը ու մի մեծ քրքիջ արձակեց։

— Ոչխարնե՛րը…– բացականչեց նա։

Մտրակեցինք ձիերնիս։ Այդ բացականչությունը ու քրքիջն էր լսածս վերջին ձայնը։